**ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ**

# Մթնոլորտայի պահպանության վիճակը Հայաստանում

*Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է բարեխառն և մերձարևադարձային գոտիների միջև: Հարավային լայնություններից եկած օդային զանգվածներր պարունակում են մանր փոշու մասնիկներ, մինչդեռ հյուսիսային զանգվածները բերում են մաքուր օդ: Արևադարձային օդային զանգվածները գերիշխում են ամռանը, եղանակը շոգ և չոր է, օդում մշտապես առկա է փոշի: Ձմռանը ձյունածածկույթը նվազեցնում է գետնի տաքացումը, ուստի անտիցիկլոնային եղանակներ՝ օդային ներխուժումներ քիչ են լինում: Այդ ժամանակ լեռնային գոգավորություններում և հատկապես Արարատյան դաշտում առաջանում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա), ձևավորվում է մառախլապատ ցածր ամպամածություն, անշարժ սառը օդը չի տեղաշարժվում ոչ հորիզոնական ոչ ուղղահայաց ուղղություններով, այլ հագենում է արդյունաբերական և կենցաղային օբյեկտներից, ավտոմոբիլներից արտանետված ծխով, փոշով, գազերով:*

*Ներկայումս՝ Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր արտանետումներ ունեցող առանձին արտադրամասերի ու գործարանների թվաքանակը նվազել է, դրա փոխարեն աճել են հանքարդյունահանման և վերամշակման ձեռնարկությունները: Ավելացել են շինարարական աշխատանքների ծավալները: Դրա հետևանքով մեր հանրապետության մի զգալի մասի օդային ավազանը աղտոտված է: Հանրապետության ամբողջ տարածքում գործում են օդային ավազանի վերահսկողության դիտակետեր, որոնց օգնությամբ տեղեկություններ օդի աղտոտվածության աստիճանի մասին Մեր հանրապետության օդային ավազանի աղտոտվածությունը նվազեցնելու արդյունավետ միջոց է անտառային տարածքների ընդարձակումը:*